



# Հակոբ Պարոնյան

## Ատանաբոյժն արևելեան

Արարուած առաջին

### ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Թափառնիկոսի տան մէջ սրահ մը, մէջտեղը սեղան՝ որու վրայ դրուած են գրքեր, մեծ ու փոքր շիշեր, շուաններ, դիտակ մը, ատրճանակ մը եւ գիր գրելու պիտոյք. պատէն հայելի մը կախուած. թիկնաթոռ եւ աթոռներ, աջ կողմը խուց մը. միջին դուռ:

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱՐԹԱ գիշերուան հագուստով, վերջը ՆԻԿՈ

ՄԱՐԹԱ բարկութեամբ ներս կը մտնէ ծառան կանչելով

Նիկո... Նիկո... Աս վերջապէս դիմանալու բան չէ, ալ համբերութիւնս հատաւ, ամէն գիշեր սպասել եւ դարձեալ միս մինակ պառկիլ... շաբաթը գիշեր մը միայն տունը կը պառկի, միւս գիշերները... չգիտեմ ուր: Պիտի հարցնեմ իրեն, նայիմ, գերի՞ առաւ գիս այս տանը մէջ... ստակովս գերի ըլլալ չեմ ուզեր: Ոչ... գիտեմ իս ինչու համար միս մինակ կը թողու, վասնզի ես ա՛լ ծերացած եմ, թէ որ տասնուվեց տարու օրիորդ մը ըլլայի, աս ճամբան չէր բռներ: Իսկ եթէ օրէնքը այսպէս կը պատուիրէ, որ կանայք երիտասարդութեան ատեն սիրուին, եւ ծերութեան ատեն նախատուին, ըսելիք չունիմ. բայց կ'ուզեմ գիտնալ թէ ո՞ր

օրէնքն է այս... միթէ՞ Սահմանադրութիւնը կը տայ այս պատուէրը. ո՞ր յօդուածին մէջ կը գրէ... տեսէ՛ք մէյ մը եւ պոռագէք թէ ազգը յառաջադիմութեան ասպարէզին մէջ կը քայլէ... բոկ ոտքով: Ո՛վ յառաջադիմութիւն, հայութիւնը պոչդ կախած գետնաքարշ ո՞ր կը տանիս, այդպիսի հապճեպով դէպի ո՞ր կը դիմես. մի՛, մի՛ այնքան շուտ վազեր, վասնզի բեռդ ծանր է, կը յոգնիս եւ ճամբու վրայ կը մնաս, եւ հայութիւնը կոնքի վրայ կ'իյնայ... պոչ ի ձեռին: Տեսէ՛ք, կնիկնին ծերութեան ատեն ասանկ երեսի վրայ կը թողուն, եւ իրենք գեղեցիկ ու երիտասարդ... ուհիներու քծնելու կ'երթան... ա՛հ բոլոր անդամներս կը դողան: ( Աթոռի մը վրայ կը նստի: Այս միջոցին Նիկո միջին դրան առջին կ'երեւի, ձեռքը կօշիկ մը՝ գոր վրձինով կը ներկէ ): Ես ալ երիտասարդութեանս ատեն երբ տասնուվեց տարու էի, անանկ աղուոր աղջիկ մ'էի որ, բոլոր աշխարհ ճամբուս վրայ կը սպասէր զիս տեսնելու համար. այն ատեն չէի՞ կրնար, եթէ ուզէի, մէկու մը հետ սիրահարութիւն ընել. օր մը աշուրներս վեր առած մէկուն երեսը նայած չունիմ, որովհետեւ մայրս այսպէս կը պատուիրէր, որովհետեւ պարկեշտութիւնը ասանկ կը պահանջէր: Բնաւ չեմ մոռնար, եկեղեցիէն ելած ժամանակս բոլոր եկեղեցականները դրան առջին կը շարուէին եւ իբր թէ իրարու հետ կը խօսակցէին, քանի քանի անգամներ եւ ականջներովս լսած եմ, որ անկէ անցած ժամանակս իրարու կ'ըսէին. «Ընկեր, նայէ սա կնիկը որքան աղուոր է, հազար ոսկի կու տայի ասանկ կին մը ունենալու համար. տես աչքերը որքան հրապուրիչ են, այտերը որքան կարմիր են»: Ասոնք իրաւ էին, վասնզի ան ատեն վարդի պէս այտեր ունէի. ետքէն ուրիշ մը կ'ըսէր. «Եղբայր, տես ինչպէս սեւ են մազերը, ինչպէս ճերմակ են ձեռքերը, որքան փոքր են ոտքերը»: Ասոնց ամէնն ալ ճշմարիտ էին. բայց ես առանց նայելու ճամբաս կը շարունակէի, եւ ինքը հիմա զիս մինակ կը թողու ասանկ: Արդարեւ իրմէ տասնհինգ տարու մեծ եմ, բայց իր օձիքէն բռնելով՝ եկո՛ւր ինձի հետ կարգուէ չըսի իրեն. ինքը յօժար կամքով եւ մանաւանդ աղաչելով ամուսնացաւ հետս, վասնզի աղուոր էի... վասնզի հարուստ էի... վասնզի ուսումնական էի..., վասնզի ստակ ունէի... վասնզի... վասն... ինչ գիտնամ, խել մը աղուոր բաներ ունէի, եւ հիմա ամէն գիշեր գլուխս առնէ երթա՛յ, ակոյ պիտի քաշեմ ըսելով... ( Կերգէ ):

Ոչ, ոչ, չեմ ուզեր,  
Որ ամէն գիշեր,  
Էրիկս դուրս երթայ,

Եւ քաշէ ակոսայ:  
Այո՛, գալուն պէս,  
Յայտնեն ամէն բան  
Թող գիտնայ թէ ես  
Մարդ եմ, չեմ անբան:

( Նիկոն տեսնելով ) Հի՞մա կու գաս:

ՆԻԿՈ

Տիկին, ես հոս էի...

ՄԱՐԹԱ

Հո՞ս էիր, ե՞րբ եկար:

ՆԻԿՈ

Երբ տասնուվեց տարու աղուոր աղջիկ մ'էիր, եւ բոլոր եկեղեցականները ճամբուդ վրայ կը սպասէին քեզ տեսնելու համար, ես այն ատենէն ի վեր հոս եմ, տիկին, ձեզի կը սպասեմ:

ՄԱՐԹԱ

Սուրճս բեր:

ՆԻԿՈ

Տիկին... ( Կերթայ ):

ՄԱՐԹԱ

Այս ամէնը մէկդի թողունք: Չէ՞ր գիտեր, որ իրմէ շուտ պիտի ծերանամ, այս յանցանքը ի՞նչ է չէ նէ բնութեան, որուն ինքը ֆաթո՛րա կ'ըսէ, նաթուրա՞ կ'ըսէ. նաթուրայովը մէկտեղ գետինն անցնի: Ամուսին մը, որ իր կնկանը ստակովը հարստացեր է, վերջէն այս ընթացքը ձեռք առնու... ի՛նչ անզգայութիւն... ի՛նչ

բարբարոսութիւն...: Փառք Աստուծոյ, կոյր չեմ, սապատող չեմ, մարմնոյս կողմէ պակասութիւն մը չունիմ, ( Հայելի կը նայի ) ի՞նչ ունիմ.. : Ինչո՞ւ համար չհամիր ինձի. մագերս միայն քիչ մը ճերմկցեր են, ի՞նչ վնաս ունի: Ինչպէս որ տարւոյն ամէն մէկ եղանակը իր գեղեցկութիւնը եւ յարգը ունի, միթէ տարիքն ալ չունի՞ նոյն գեղեցկութիւնը. օրինակի համար, գարնան ատեն դալարեօք զարդարուած լեռ մը որքան որ գեղեցիկ տեսարան մը ընծայէ մեր աչքին, ձմեռ ատեն ալ երբ նոյն լեռը ձիւնով ծածկուի աղուոր չե՞րեար, բայց էրիկ մարդիկ միշտ գարունը կ'ուզեն. ի վերայ այս պէտք է գիտնալ, որ ամէն տարիք իր գեղեցկութիւնն ու յարգը ունի: Հասակը առած տիկիներէն ծափահարութիւն առնելու համար չեմ ըսեր, ես շողորթ չեմ, ճշմարիտը կը խօսիմ: Ա՛հ... էրիկ մարդեր, ամէն տեղ կանայքը վար կը գարնէք, կը բամբասէք. հանդարտ եղիք, ա՛լ ժամանակը հասաւ, որ անոնք ալ պիտի սկսին ձեր վարքը նկարագրելով գրքեր յօրինել, ա՛հ, Թափառնիկոս, վրէժ պիտի լուծեն քէնէ, վրէժ: ( Սեղանին վրայէն շիշ մը կ'առնու եւ գետինը գարնելով կը կոտրէ ):

ՆԻԿՈ, սուրճը բերելով

Հրամանէ՛, տիկին:

ՄԱՐԹԱ

Թափառնիկոսը եկա՞ւ:

ՆԻԿՈ

Տիկին ես հագիւ թէ անկողին մտած էի, դրան ձայնը առի՞ բա ա աթ. իսկոյն ոտք ելայ, սկսայ ճրագը փնտռել. այս միջոցին դարձեալ չորրորաթրարաթրաթ, իբրեւ որոտումն երկնից, խելքս գլխէս թռաւ, ինչ ընեն, գիշեր ատեն ճրագ չկայ, սենեկին դուռն ալ կորուսի, ծունկի վրայ գալով, «Ով Աստուած իմ, դուն ողորմէ» ըսելու չմնաց, դարձեալ թրրաթ, կարծեցի որ տունը կը փլի... կամաց կամաց սենեկին դուռը գտայ, վարտիքս գլուխս անցուցի, փողոցին դուռը բանալուս պէս, աս ինչ կերպարանք է ( Բարձրաձայն ), Է՛ջ ( Յած ) ըսաւ...

ՄԱՐԹԱ, վախնալով

Կորի՛ գարշելի:

ՆԻԿՈ, երթալով

Վերջը ապտակ մը գարկաւ, ես ալ գացի պատկեցայ:

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՐԹԱ, ԵՐԱՆԵԱԿ

ԵՐԱՆԵԱԿ

Բարեւ, մայրիկ, ի՞նչ ունիս աս առտու. բարկացած կ'երեւիս:

ՄԱՐԹԱ

Մ'ըսեր բարկացած, այլ խելքը փախուցած: Երանեակ, հայրդ իւր ընտանիքին թշուառութիւն կը պատրաստէ իր անվայել վարքով, աս առտու, երբ արթնցայ ու գինքը սենեկին մէջ շտեսայ, կարծեցի որ տունը գլուխս փլաւ: Ո՞ր գացեր է դարձեալ երէկ գիշեր:

ԵՐԱՆԵԱԿ

Անշուշտ հիւանդ նայելու գացած պիտի ըլլայ:

ՄԱՐԹԱ

Ի՞նչ տեսակ հիւանդներ ունի, որ միշտ գիշեր աստն կ'երթայ նայելու:

ԵՐԱՆԵԱԿ

Ինքը կ'ըսէ, որ ակռայի ցան շատ անգամ գիշերը կը հանդիպի, եւ թէ ցաւած ժամանակը պէտք է որ դարման մը ըլլուի շուտով:

ՄԱՐԹԱ

Ասոնց ամէնն ալ անտեղի բացատրութիւններ են. ես չեմ հաւտար: Այսօր պիտի խօսիմ հետը, կամ իր վարքը ուղղէ եւ կամ... ես գիտեմ ինչ ընելիքս, ասանկ ամուսնութիւն չըլլար: ( Երանեակը կը հառաչէ ) Ի՞նչ ունիս, աղջիկս... ինչո՞ւ կը հառաչես:

**ԵՐԱՆԵԱԿ**

Ոհ, մայրիկ, ինչպէս չհառաչեմ մինչդեռ ակներեւ կը տեսնեմ որ իմ ամուսնութիւնս ալ ձերինին պէս պիտի... պիտի...

**ՄԱՐԹԱ**

Ի՞նչ կը խօսիս, Երանեակ, Մարգարը ազնիւ բնատրութեան տէր...

**ԵՐԱՆԵԱԿ**

Ազնիւ բնատրութեան տէր... Ի՞նչ ընեմ որ դրսեցի է... ես կ'ուզէի Պոլսեցոյ մը հետ եթէ հնար էր...

**ՄԱՐԹԱ**

Դուն ալ իմ բարկութիւնս աւելի եւս գրգռելու համար կ'ընես այդ խօսքերը. ամբողջ տարի մ'է որ հետը նշանուած ես եւ գոհ էիր, այսօր մէկէն ի մէկ պատի՛ւ, ի՞նչ ունի տղան. քաղցրաբարոյ պատանի մ'է:

**ԵՐԱՆԵԱԿ**

Ըհ, քաղցրաբարոյ, միշտ հին լաթեր կը հագնի, բնաւ նոր հագուստ մը տեսած չունիմ վրան. նշանուած մէկը անանկ պատռտած զգեստով պտըտի... ոչ, մայրիկ, ոչ, աւելի կը սիրեմ ամուրի մնալ, քան թէ Մարգարի պէս հնասէր մարդու մը հետ... հետ... ( Մեկուսի ) ահ, Լեւո՛ն, Լեւոն...:

**ՄԱՐԹԱ**

Ալ պիտի բարձրացնեմ ձայնս, ասպատամբ աղջիկ, դուն ալ գլուխ վերուցիր, չե՞ս հաւնիր նշանաձիդ, որուն ազգասիրութիւնը...

## ԵՐԱՆԵԱԿ

Ըհ, ազգասէր, միշտ հին լաթեր կը հագնի: Մեծ քիթ մը ունի, ճակատը դուրս ելած, կարճահասակ, մինչդեռ անդին լուսնի պէս աղուոր երիտասարդ մը...

ՄԱՐԹԱ, բարկութեամբ

Ի՞նչ ըսիր, ի՞նչ, անգամ մ'ալ գուրցէ, շուտ եղիր:

ԴՐՍԷՆ

Թրի թա թա թի թա թա:

ՄԱՐԹԱ

Աներես աղջիկ, գնա սենեակդ քաշուէ՛, վերջը կը խօսիմ քեզի հետ: ( Երանեակ կ'երթայ ):

ԴՐՍԷՆ

Թի թա թի թա թի թա թի...

ՄԱՐԹԱ

Շուտ եկուր որ տեսնես թի թա թի:

ԴՐՍԷՆ

Թի ըա ըա թի ըա ըու...

ՄԱՐԹԱ

Եկուր որ խօսք հասկնանք իրարու:

ԴՐՍԷՆ

Թի թա թա:

ՄԱՐԹԱ

Աստուած պատիժդ տայ:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆ եւ ԹԱՓԱՌՆԻԿՈՍ գիշերազգեստով

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Թի բա բա, բարեւ, անուշիկս:

ՄԱՐԹԱ, մեկուսի

Անուշիկը:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ինչո՞ւ համար առանձին նստեր ես, նոնուշիկս:

ՄԱՐԹԱ, բարկութեամբ

Չեմ գիտեր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Տիկինը այսօր բարկացած է, հա՛ հա՛ հա՛, ծերուկ տիկին:

ՄԱՐԹԱ, բարկութեամբ

Ծերուկ տիկին, եւ կը յանդգնի՞ս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չյանդգնելու ի՞նչ կայ:

ՄԱՐԹԱ



Կ'ուզե՞ս որ բերանս բանամ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Բա՛ց, որ հով առնես:

ՄԱՐԹԱ

Երկուշաբթի գիշեր ո՞ր էիր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Հիանդ նայելու գացեր էի:

ՄԱՐԹԱ

Երեքշաբթի՞:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մէկուն ակոսն քաշելու:

ՄԱՐԹԱ

Չորեքշաբթի՞:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ակոսայ լցնելու:

ՄԱՐԹԱ

Հինգշաբթի՞:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ակոսայ պարպելու, հա՛ հա՛ հա՛, մեր տիկիինը օրացոյց է. շաբթուան բոլոր օրերը անսխալ կը գցունէ:

ՄԱՐԹԱ

Այո՛, պարոն, օրացոյց մ'եմ, եւ այնպիսի օրացոյց մը, որ մինչեւ վերջին շունչդ չպիտի փոխես: Երէկ գիշեր ո՞ր էիր, ո՞ր կորսուած էիր, ո՞ր ծակը մտած էիր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Երէկ գիշեր կորսուած չէի, թատրոն մտած էի, ուր ազգային ներկայացում մը տուին: Հայ եղողը պէտք է ազգային հանդէսներուն ներկայ գտնուի:

ՄԱՐԹԱ

Առանց ինձի թատրոն կ'երթաս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Թատրոնը ծերերու համար չէ:

ՄԱՐԹԱ

Հապա ձեզի համար, երթալ անկէ վարպետութիւններ սորվիլ. եւ ետքը ձեր կիները խաբել, վասնզի դուք միայն խաբելու եւ խնդալու կտորներու ուշ կը դնէք, ոչ թէ ամբողջ խաղին՝ որ լի է բարոյականութեամբ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դուն ի՞նչ կը ծախես:

ՄԱՐԹԱ

Ես ի՞նչ կը ծախեմ, սրիկայ. դուն իմ ստակովս մարդ եղար, համբաւ ստացար, հիմա զիս միս մինակ թողլով, զլուխդ կ'առնես թատրոն կ'երթաս:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ուրիշ անգամուն գլուխս քեզի կը ձգեմ անանկ կ'երթամ:

## ՄԱՐԹԱ

Կը ծաղրե՞ս զիս, խայտառակ, իմ ստակովս մարդ եղար:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Անցեալ օր աղուոր երգ մը լսեցի, մտիկ ըրէ, երգեմ նայէ ինչպէս պիտի հաւնիս: ( Կ'երգէ ):

Ստակով կնիկ մ'ատներ

Իշխել կ'ուզէ վրադ

Առտու, ցերեկ, գիշեր

Ապտակ կու տայ բադ, բադ:

Ո՛հ գէշ ատեն

Անշահ բան

Իրաւ շատ

Անպիտան:

## ՄԱՐԹԱ

Մտիկ ըրէ, երկրորդ տունն ալ ես երգեմ, նայէ ինչ աղուոր է: ( Կ'երգէ ):

Առանց ստակի կնիկ

Թէ որ առնել ուզես՝

Ծախես բաճկոն շապիկ

Որ զինք սնուցանես:

Գէշ ատեն, եւ այլն:

Առանց ինձի թատրոն կ'երթաս, այնպես չէ՞:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Այնպես է:

**ՄԱՐԹԱ**

Պարոն, քեզի բան մը հարցնեմ, գիտե՞ս թե ինչ է կին մը:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Այո, գիտեմ. կին մը իր ամուսնոյն գլխուն փորձանք է:

**ՄԱՐԹԱ**

Լեզուդ չորնայ, ի՛նչպես ալ առանց կարմրելու կը համարձակիս ըսելու թե փորձանք է, մինչդեռ բոլոր աշխարհ կը վկայէ որ դուն իմ ստակովս մարդ եղար: Պատասխան տո՛ւր, նայիմ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Տամ:

**ՄԱՐԹԱ**

Պապանձէ՛:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Պապանձիմ:

**ՄԱՐԹԱ**

Բերանդ գոցուի, գրուցէ՛, գերի՞ առիր զիս այս տանը մէջ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Ինչո՞ւ գերի պիտի ըլլաս. կին մը տան մէջ կահ կարասիք կը սեպուի:

**ՄԱՐԹԱ**

Կահ կարասիք. տեսէք ի՞նչ պաղարեամբ պատասխան կու տայ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Էրիկ մարդիկ պաղարին են, կնիկները տաքարին կ'ըլլան. ( Մեկուսի ) ամառը:

**ՄԱՐԹԱ**

Անօրէն մարդ, ըրածիդ կը հաւնի՞ս, ամուսնութեան մէջ միշտ վէճ, կռիւ կը վայլէ՞:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Առանց կռուոյ ամուսնութիւնը անլի կերակուրի կը նմանցնեն խոհարարները:

**ՄԱՐԹԱ**

Աղջիկ գաւակ ունիս, պէտք չէ՞ որ խնամք ունենաս վրան, հոգաս եւ կառավարես զինքը:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Աստուած մարդս ազատ ինքնիշխան ստեղծեց. աղջիկս անձին տէրն է, կրնայ զինքը կառավարել. ես Աստուծոյ դէմ չեմ մեղանշեր:

**ՄԱՐԹԱ**

Գիտցիր որ այդ խօսքերը մահուանս պատճառ պիտի ըլլան. ասանկ կեանք անցունել չըլլար. ես ապրիլ կ'ուզեմ, մանաւանդ շատ ապրիլ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Ինձի ի՞նչ կ'ըսես, Արուեստ երկայնակեցութեան կարդա:

ՄԱՐԹԱ

Լո՛ւ՛, անգութ. աստու որ ինձի պէս պարկեշտ կին մունիս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Քու տարիքիդ մէջ կանայք պարկեշտ ըլլալու են:

ՄԱՐԹԱ

Ալ բաւ է, պիտի լռե՞ս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դուն ալ լռէ:

ՄԱՐԹԱ

Անուանութեան կապը կամաց կամաց թուլնալ սկսաւ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Տաքէն անանկ կ'ըլլայ:

ՄԱՐԹԱ

Բոլորովին պիտի քակուի, գիտե՞ս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չանհկա կապողը պինդ կապեր է. չքակուիր, քահանաներուն կապածը աշխարհականները չեն կարող քակել:

ՄԱՐԹԱ

Ես կը քակեմ:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Գէշ շրլլար:

## ՄԱՐԹԱ

Բոլոր լրագիրներու մէջ հրատարակել պիտի տամ թէ ( Բարձրաձայն )  
Թափառնիկոս իր կինը թողուց:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Շատ աղէկ խորհեր ես. ասով բարութիւն մը ըրած կ'ըլլանք, թէ որ մեզի պէս  
ուրիշ կոտող ամուսիններ ալ գտնուին, անոնց օրինակ կ'ըլլանք, թող անոնք ալ  
բաժնուին: Ասով լրագրապետներն ալ կը վաստկին. թո՛ղ վաստկին, ինչու որ  
անոնք ազգին եւ ընդհանուր մարդկութեան յառաջադիմութեան համար  
կ'աշխատին. գրել տո՛ւր, ծանուցման մէկ տողը երեք դահեկան է:

## ՄԱՐԹԱ

Ինչպէս որ կ'երեւի դուն չես ամչնար:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Փառք Աստուծոյ, ամչնալու ի՛նչ կայ որ...

## ՄԱՐԹԱ

Երբ ըսեն թէ Թափառնիկոս իր կինը թողեր է:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պիտի ըսեն թէ պատերազմէն ողջ դարձեր է:

## ՄԱՐԹԱ

Շատ աղէկ, մնաք բարով:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Երթար բարով:

ՄԱՐԹԱ

Ապրիս...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դուն ալ ապրէ:

ՄԱՐԹԱ

Ուրեմն մնար բարով:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Երթար բարով:

ՄԱՐԹԱ

Վերջինն է որ կ'ըսեն, աղէկ խորիէ եւ անանկ պատասխանէ. մը... նար... բա...  
բր...ն...վ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Երթար բարրր... ով...

ՄԱՐԹԱ

Քեզի դէմ դատ պիտի բանամ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Բա'ց:



ՄԱՐԹԱ

Տանդ դռները պիտի գոցեմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Գոցե՛:

ՄԱՐԹԱ

Ընդհանուր ժողովքը պիտի ելնեմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ելի՛ր:

ՄԱՐԹԱ

Վերջէն Թաղական պիտի իջնամ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Իջի՛ր:

ՄԱՐԹԱ

Վերջը կը տեսնուիմք: ( Կերթայ ):

ՏԵՍԻԼ Դ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, առանձին, վերջը ՄԱՐԿՈՍ

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կորսուեցաւ, գնաց թշուառականը. առաւօտուն ելեր՝ կռիւ ընելու պատճառ կը փնտռէ. կը տեսնես անգամ մը ըրած հարցումները, երկուշաբթի ուր էիր,

երեքշաբթի ուր էիր, չորեքշաբթի ուր, ուր էիր, ուր էիր, ուր էիր... ո՞ր ծակը մտած էիր, ո՞ր կորսուած էիր. կարծես թէ դպրոցի մէջ ենք եւ քննութիւն կու տանք: Ա՛հ... ես մեծ յանցանք մը գործեցի ստակով կնիկ առնելու... Բայց ինչ ընելու է... թէ որ հարուստ աղջիկ մը առնու, ահա ասանկ կ'ըլլայ. իրեն գերի ըլլալու է... թէ որ աղքատ աղջիկ մը առնու, ան ատեն ալ իրեն ծառայ ըլլալու է. միշտ անոր համար աշխատելու է, որ ուտէ, խմէ, հագուի, սգուի... ինչեւէ գոնէ այն ժամանակ հանգիստ ու երջանիկ կեանք մը կը վարես, ասանկ ամէն օր կրի չըլլար, ես այսպէս կը հաւատամ. իրաքանչիւր ոք իրեն հասակին, հարստութեան, բնութեան, սիրոյն համապատասխանող ընկեր մը գտնալու է, որպէսզի այս վաղանցուկ կեանքին մէջ երանելի ամուսնութեամբ ապրի: Վաթսուն տարուան եղեր է եւ սիրուիլ կ'ուզէ... Սէ՛ր, սէ՛ր, ո՛ր տեղուանք կ'երթաս. դուն յիրաւի կոյր ես եղեր: Իսկ ես ալ աղէկ պատասխանեցի իրեն, ինչ որ ուզէ թող ըսէ: Մա աղէկութիւնը ունի որ շուտով կը հաշտուի. քէն չպահեր: ( Գետինը կոտրած շիշը տեսնելով ) Ա՛յ սատանորդի, շիշը կոտրեր է: ( Կ'առնէ գետնէն կը հոտուրտայ ու քիթը բռնելով ասդին անդին կը վագրոտէ ) Ո՛հ... քիթս... բերանս... գլուխս... ամէնէն պիտանի դեղն թափեր է, անուշադրի ոգին:

ՄԱՐԿՈՍ, դռնէն մտնելով

Ասիկա ըլլալու է պարոն Թափառնիկոսը:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, չը լսելով, բարկութեամբ

Ա՛հ, կանա՛յք, կանայք, տուներու մէջ դուք էք անհանգստութեանց պատճառ:

ՄԱՐԿՈՍ, ինքնիրեն

Բարկացած կ'երեւի:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Թէ որ տան մէջ ոտք կոխէ, բզիկ բզիկ պիտի ընեն գինքը:

ՄԱՐԿՈՍ

Բարով, պարոն Թափ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ամեն օր, ամեն ժամ կը պոռայ թէ իր ստակովը մարդ եղած եմ...

ՄԱՐԿՈՍ

Բարեւ, պարոն Թափառ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ես չեմ ուրանար, իր ստակին համար առի զինքը. բայց դաշնադրութեան ատեն չըսաւ որ ամեն օր այսպէս պիտի պոռայ: ( Կնկան ձայնով ) Ի՛նչ ստակովս մարդ եղար:

ՄԱՐԿՈՍ

Բարեւ, պար...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Երբ էրիկ մը կնկան իշխանութեանը տակ է՝ ամուսնութիւնը անկատար է եւ վնասակար:

ՄԱՐԿՈՍ

Բարեւ, պարոն Թափ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ծունկերս կը դողդղան, չեմ կրնար ոտքի վրայ կայնիլ, այսպէս բարկացնէ զի՛ս... չգիտեմ ո՛ր փիլիսոփան կը գրէ թէ՛ մէկը բարկացած ժամանակը ա թ գ- ը մինչեւ վերջը եթէ կարդայ, բարկութիւնը կ'անցնի. փորձենք...

ՄԱՐԿՈՍ

Բարեւ, պարոն Թափ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Աբգդեզէրթժիլխծկհձճ... սխալեցայ: ( Աւելի բարկութեամբ նորէն կը սկսի, դարձեալ կը սխալի ) Լսողն ալ պիտի կարծ է որ աբգ -ը չեն գիտեր. ահա հարուստ աղջիկ առնող ամուսիններն ասանկ Քերական կը կարդան: ( Աբգ-ը մինչեւ վերջը կ'ըսէ ) Բարկութիւնս երթալով կ'երթայ եւ կը սաստկանայ, ուրիշ կերպով փորձենք. աա բբ գգ դդ եե զզ էէ ըը թթ ժժ իի լլ խխ ծծ կկ հհ ձձ դդ ճճ մմ յյ նն շշ ոռ չչ պպ ջջ ոռ սս վվ տտ ըր ցց սս փփ քք եւեւ օօ ֆֆ: Աս բարկութիւնը ինձի սուղի պիտի նստի...

ՄԱՐԿՈՍ, ինքնիրեն

Փախո՞ւկ է, ի՞նչ է:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ախշ բժայ գկջ...

ՄԱՐԿՈՍ, բարձրաձայն

Ի՞նչ գղվ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, բարկութեամբ վրան երթալով

Չի՞ս կը ծիծաղիս, խայտառակ մարդ:

ՄԱՐԿՈՍ

Էհ, պարոն երկու ժամէ ի վեր ձեզի կը սպասեմ, ակոսս կը ցալի:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Նստէ՛ք քիչ մը:

## ՄԱՐԿՈՍ

Շատ աղէկ, պարոն, նատիմ: ( Կը նատի ):

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Արդէն աչքէդ յայտնի է, որ ակռադ կը ցաւի:

## ՄԱՐԿՈՍ

Կ'աղաչեմ, պարոն ատամնաբոյժ, ձեռքէդ եկածը մի ' խնայեր զիս բուժելու համար: Ձեր համբարը Պոլսոյ մէջ ամբողջ տարածուեր է, ես ալ, ձեր անունը լսելով, փութացի հոս գալ, որպէսզի...

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Վասնզի՝ արուեստս կանոնաւոր կերպով յառաջ կը տանիմ: Ես Եւրոպայի մէջ ուսեալ բժիշկներէն չեմ. իմ բժշկութիւնս բնականէն է. ինձի եկող հիւանդները միշտ գոհ կ'ըլլան, կը յուսամ, որ դուն ալ անոնց պէս շնորհակալութեամբ պիտի երթաս:

## ՄԱՐԿՈՍ

Շատ աղէկ...

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մէ՞կ հատ միայն կը ցաւի, չէ նէ ամէնն ալ...

## ՄԱՐԿՈՍ

Մէկ հատ, պարոն, մէկ հատ...

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մէկ հատ կամ երեսուն երկու հատ ըլլայ, չէ ինձ փոյթ. ինձի համար միեւնոյն քանն ըսել է:

ՄԱՐԿՈՍ, մեկուսի

Ճարտար մէկու մը կը նմանի:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Շատո՞նց ի վեր է որ ունիս այդ ցաւը:

ՄԱՐԿՈՍ

Շուրջ երկու շաբաթ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Արուեստդ ի՞նչ է:

ՄԱՐԿՈՍ

Վաճառական մը...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, թիկնաթոռէն ելնելով

Ներեցէք, եթէ չկրցի ճանչնալ զձեզ. հրամանեցէք հոս նստեցէք, ոտքդ պագնեմ, ելէք թիկնաթոռը նստեցէք:

ՄԱՐԿՈՍ

Հոգ չէ, պարոն. աշխատ մ'ըլլաք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կ'աղաչեմ: ( Մարկոս թիկնաթոռին վրայ կը նստի ) Շարունակեցէք: ( Յարգանքով կը վարուի ):

ՄԱՐԿՈՍ, մեկուսի

Ի՞նչ խոնարհ մարդ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, մեկուսի

Ի՞նչ ազահ մարդ:

ՄԱՐԿՈՍ

Վաճառական մէի ատենօք, իսկ հիմա շաղացքի մը մէջ գործաւոր եմ: Մարդ չե՞նք, այսօր հարուստ՝ վաղը աղքատ, այսօր առողջ՝ վաղը հիւանդ. այսօր աշխարհ՝ վաղը գերեզման. բայց ես յոյսս չեմ կտրեր, քիչ ժամանակէն երեւելի վաճառական մը ըլլալու դիտաւորութիւն ունիմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ըղձալի դիտաւորութիւն: ( Մեկուսի ) Սա անօրէն կնկան պատճառով այսօր գործերս ձախորդ կ'երթան:

ՏԵՍԻՆ Ե.

ՆՈՅՆՔ եւ ՆԻԿՈ

ՆԻԿՈ, սուրճը բերելով

Տէր...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, Մարկոսին

Ի՞նչպէս անցուցիր այս գիշեր:

ՄԱՐԿՈՍ

Ամենեւին աչքս չգոցեցի:

ՆԻԿՈ

Յայտնի է որ պարոնին աչքը կը ցաւի:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Մինչեւ որ սուրճս խմեմ, դուն նախապատրաստութիւնները լմնցու, Նիկո՛:

պարոնին ակռան պիտի քաշենք:

ՆԻԿՈ

Այո՛, տէր իմ:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ, սուրճը խմելով

Ուշադրութեամբ ըրէ՛ որ չվախնայ:

ՆԻԿՈ

Այո՛, տէր:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Նայէ որ բռնութիւնը ձեռք չառնենք:

ՆԻԿՈ

Այո՛:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Անուշութեամբ լմնցուր:

ՆԻԿՈ

Շատ աղէկ: ( Կերթայ սեղանին վրայէն չուան մը կ'առնու ) Քովս եկուր, եղբայր:



## ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Քովր գնա:

ՆԻԿՈ, Մարկոսին ձեռները կապել կ'ուզէ, որն որ չթողուր

Թող տուր որ կապեմ:

## ՄԱՐԿՈՍ

Ինչո՞ւ, եղբայր, ես խե՞նդ եմ. փառք Աստուծոյ, խելքս գլուխս է. ակոսայի ցաւ ունիմ:

## ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Հնազանդութիւն, պարոն. իմ բանեցուցած կերպերս թէպէտ եւ հիւանդներուն անհաճոյ կ'երեւին, բայց վերջէն հաճութեամբ դուրս կ'ելնեն. թող որ կապէ, թո՛ղ, թո՛ղ:

## ՄԱՐԿՈՍ

Ի՞նչ կ'ըսէք, ես գո՞ղ եմ, աւագա՞կ եմ որ...

## ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Ես քու գիտցած բժիշկներէն չեմ. իմ արուեստս ինչ որ կը պահանջէ, կատարելու եմ. կ'իմանա՞ս, պարապ տեղը մի՛ բարկացնէր զիս. թող տուր կապէ:

## ՆԻԿՈ

Վերջէն պիտի գոջաս:

## ՄԱՐԿՈՍ

Բայց...

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ, սեղանին վրայէն ասորճանակն առնելով Մարկոսին կ'ուղղէ

Հնազանդութիւն:

ՄԱՐԿՈՍ

Թո, թո... թո թող կենայ...

ՆԻԿՈ, կապելով

Ինչո՞ւ խօսք մտիկ չէք ըներ:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Մի վախնար, իմ սովորութիւնս է, երբ մէկուն ակռան պիտի հանեն, ձեռները կը կապեն, անհոգ եղիր դուն. սեպէ՛ թէ ակռադ ելաւ. հիմա իմ հարցումներու պատասխան տո՛ւր. արեւելեա՞ն թէ արեւմտեան կողմը կը ցաւի:

ՄԱՐԿՈՍ

Չաղա՞ ցքը կը հարցնէք, պարոն հոս մօտ պարտեզին մէջն է:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Ատիկա իմ հարցմանս պատասխան չէ:

ՄԱՐԿՈՍ, Նիկոյին

Ի՞նչ ըսել կ'ուզէ:

ՆԻԿՈ

Միշտ ասանկ կը հարցնէ, պատասխանելու է...

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Վարի՞ յարկն է չէ նէ վերի:

ՄԱՐԿՈՍ

Վերի յարկը, պարոն, վերի յարկը, յիսուն դահեկան ամսականաւ վարձեր եմ.  
պգտիկ սենեակ մ'է, ձմեռը շատ տաք կ'ըլլայ, վասնզի թղթապատ է. կին մ'ալ կայ  
հոն որ անկողինս կը շինէ եւ ինձի ծառայութիւններ կ'ընէ, թէ որ կ'ուզէք, սենեակ  
մ'ալ ձեզի համար վարձեմ, փողոցն ալ գէշ չէ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Չհասկցար իմ հարցումներս, բերնիդ ո՞ր կողմն է ցաւող ակռան:

ՄԱՐԿՈՍ, մատովը կը ցուցնէ աջ կողմը

Ահա, պարոն, սա կողմը:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Ես ալ քեզի աս հարցուցի, եւ դուն շաղացքին պարտեզի մէջ ըլլալն ըսիր: Վարի՞  
շարքէն է ցաւող ակռան:

ՄԱՐԿՈՍ

Այո՛, այո՛, ահա ( Յցունելով ), վարի շարքէն:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Եւ դուն բնակած սենեակիդ վերի յարկը թղթապատ եւ տաք ըլլալը ըսիր: Ես  
բերնին մէջ գտնուած տեղերուն եւ գործիքներուն մէջ մէկ անուն տուած եմ, եւ  
միշտ անանկ կը հարցնեմ. կ'ուզեմ որ ինձի եկող հիւանդներն ալ սորվին:

ՆԻԿՈ, ցած, առ Մարկոս

Ջանա որ սորվիս, ուրիշ անգամուն պէտք կ'ըլլա յ:

ՄԱՐԿՈՍ, մեկուսի

Ասիկա վարպետ մէկուն կը նմանի. ինչե՛ր կը հարցնէ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Էհ, գործը լմնցաւ, ցատող ակռային ուր ըլլալն ալ իմացանք, հիմա զայն հանելու աշխատելու է. Նիկո, սա ատրճանակը ա՛ն եւ պարոնին դէպի բերանը ուղղէ:

ՄԱՐԿՈՍ, վախնալով

Ի՞նչ կ'ըսէք, պարոն:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ամենափոքր շարժում մը ընելուն պէս պարպէ՛:

ՄԱՐԿՈՍ, թոթովելով

Թող կենայ, չեմ ուզեր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Լո՛ւ՛. պիտի պարպէ:

ՄԱՐԿՈՍ, ապշած, շուարած, արձանի պէս կը կայնի անշարժ

Ով Աստուած իմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ինչչափ վախկոտ ես, ծօ տղա՛յ:

ՄԱՐԿՈՍ

Չէ... չէ... վախ... կոտ... չեմ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Բերանդ բա՛ց... քիչ մ՛ալ բա՛ց, որ լոյսը ներս մտնէ, կրցածիդ չափ բա՛ց... սա պզտի փատը մէջտեղը դնեն, որ չգոցուի. ( Կը դնէ ) հա՛. այսպէս կեցիր, ես ալ

պատրաստ ու իմ որպէսզի դիրութեամբ կարենամ գործել: ( Գիշերագգեստը, գլխարկը կը հանէ, շապիկին թելերն վեր կ'առնէ ) Ալ վախ պէտք չէ. սեպէ թէ ակռադ ելաւ:

ՄԱՐԿՈՍ

Ըհ, ուհ... ըհ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, դիտակով Մարկոսին բերնին մէջը կը նայի

Չկրցի տեսնել: Նիկո, սա ճրագըս վառէ. ինչ անտեսա ն ելի ակռայ, նայինք ճրագով պիտի կարենա՞նք գտնել: ( Ճրագը Մարկոսին բերնին կը մօտեցնէ ):

ՄԱՐԿՈՍ, ետ ետ կ'երթայ

Ա՛հ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Նիկո, կապէ՛ ոտքերը:

ՆԻԿՈ

Կը հնազանդիմ, տէր: ( Կը կապէ ):

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, արոտի վրայ կ'ելնէ

Ծունկ չոքէ, շուտ եղիր. ժամանակ չկորսնցնենք: ( Արցանը բերնին մէջ կը խոթէ եւ կը սկսի քաշել ) Ա՛հ, փատը ինկաւ:

ՄԱՐԿՈՍ

Ի՞նչ կ'ընէք, պարոն, լեզուս պիտի փրցնէք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մարդս կը սխալի երբեմն:

## ՄԱՐԿՈՍ

Կ'աղաչեմ, թո՛ղ արքանը եւ ուրիշ կերպով եթէ հնար է հանել, կատարէ՛, ապա թէ ոչ՝ ես պիտի երթամ:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Տեսակ տեսակ գործիքներով յառաջ կը վարեմ արուեստս, հանդարտ եղիր, սեպէ՛ թէ ակռադ քաշուեցաւ: Իմ վարպետութիւններս Եւրոպայի բժիշկները կը զարմացնէ եւ ի ծիծաղ կը շարժէ զանոնք: Ինձի նայէ՛, բարեկա՛ն, մէկը կատարեալ բժիշկ ըլլալու համար բաւական խելք ունենալու է. միայն բժշկութեան վկայականով չլմննար, ինչպէս որ վարդապետ մը սեւ վեղարով չկրնար կատարեալ վարդապետ ըստիլ՝ թէ որ ուսմունք չունենայ. ասոնցմէ զատ ատամնաբոյժ մը շատ վարժած ըլլալու է որ...

## ՆԻԿՈ

Ինքը շատ վարժած է:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Անհո՛գ եղիր դուն, թէպէտ եւ քիչ մը խստութեամբ խօսեցայ հետդ, բայց իմ արուեստս այնպէս կը պահանջէ. անուշութեամբ չըլլար: Խստութեամբ սկսած գործին անուշութիւն կը յաջորդէ, ինչպէս որ անուշութեամբ սկսած գործին խստութիւն... ինչպէս որ փոթորիկէն վերջը խաղաղ հողմ... ինչպէս որ տրտմութենէ վերջը ուրախութիւն, ինչպէս որ... ինչպէս որ աղքատութենէ վերջը...

## ՄԱՐԿՈՍ

Մո՛ւ րոողութիւն...

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չէ, հարստութիւնը կը յաջորդէ: Կոնակիդ վրայ պատկէ՛, գաւակս, ես մինչեւ հիմա կրնայի քու բոլոր ակոսաներդ քաշել, այլ ինչ ընեմ որ քիչ մը բարկացած եմ այսօր. պատկէ, տղաս, պատկէ. սեպէ թէ ակոսող ելաւ: ( Մարկոս կը պատկի, Թափառնիկոսը սեղանին վրայէն դերձան մ'առնելով) Սա դերձանը ակոսայիդ պիտի կապեմ, կապելուս պէս լմնցաւ գործը. բա՛ց բերանդ... տեսայ... ահա կապեցի... անհոգ եղի՛ր... տեղէդ չերերաս... Նիկո, ատրճանակը շտկէ՛: (Մարկոսին առջեւը կը նստի եւ ոտները Մարկոսին ոտներուն կոթնած կը սկսի քաշել ) Կը ցաւի՞... համբէ՛րէ... ինչ ընենք, հիմա պիտի ելլայ... թշուա՛ն տղայ, ընկո՞ւզ կոտրեցիր, ինչ ըրիր, որ ասանկ... տէր ողորմեա... ասանկ ակոսայ մը, որ տեղէն չշարժիր:

ՄԱՐԿՈՍ, պոռալով

Ահ, ուհ, բուֆ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Նիկո, ատրճանակը մի՛ թողուր... համբերութիւն, տղաս... սեպէ՛ թէ ակոսող ելաւ: ( Քիչ մ'ալ ուժով կը քաշէ դերձանը կը փրթի. ինքն ալ կոնըկի վրայ կ'իյնայ ):

ՆԻԿՈ, տիրոջը վրան մաքրելով

Փոշի եղաւ վրադ:

ՄԱՐԿՈՍ, պատկած

Ա՛հ... ո՛հ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Գիտեմ ես... բոլոր յանցանքը կնկանս է, որ զիս բարկացուց: ( Ոտները գետին զարնելով ):

ՄԱՐԿՈՍ

Ո՛հ... բո՛ւՖ... ( Ոտք ելնել կը շանայ ):

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Ինչո՞ւ կ'ելնես, պատկե՛, տեղեղ մի՛ շարժիր, մաճապարեր, ծունկ չոքե՛ եւ սեպե  
թե ակոռդ ելաւ: ( Ուրիշ դերձան մը կը հանէ, կը կապե ցատդ ակոռն ) Այս  
անգամ ալ թե որ չյաջողիմ... ( Կը սկսի քաշել ) ահա ձայն մ'առի, պիտի ելլայ...

**ՄԱՐԿՈՍ**

Ա՛հ, պարոն, թո՛ղ տուր ելնեմ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Պապանձե, ահա ելաւ... ահա... քիչ մ'ալ համբերե... ( Ուժով կը քաշել ) Ա՛հ,  
վերջապէս յաջողեցայ... ( Ակոռն Մարկոսին տալով ) ա՛ն ակոռդ... ինձի  
Թափառնիկոս կ'ըսեն... ինքզինքս գովելու համար չեմ ըսեր, բայց կը պարծենամ  
որ այս արուեստին մէջ ինէ յաջողակը չկայ: Թող Երոպայի մէջ ուսեալ  
բժիշկները պնդեն թե իրենք շատ վարպետ են...

**ՄԱՐԿՈՍ**

Գիտե՞ք, պարոն, որքան դժուար է այս ակոռայի ցան քաշելը:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Գիտե՞ք, պարոն, որքան դժուար է ակոռայ քաշելը:

**ՄԱՐԿՈՍ**

Ողջ ըլլաք... բայց ցան փոխանակ մեղմանալու սաստկացաւ:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Առջի բերան անանկ կ'ըլլա յ:



ՆԻԿՈ

Անանկ կ'ըլլա յ ամենուն ալ:

ՄԱՐԿՈՍ, մատուրներովը ակոռները գննելով

Տառող ակոռան հոս է, ահա տե՛ս, դուք սխալմամբ քովի ակոռան քաշեր էք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կոյր ըլլալու եմ, որ ատանկ բան մը ընեմ:

ՄԱՐԿՈՍ

Սխալած էք. է՛հ, պարոն ատամնաբոյժ, այս խաղը դեռ շատ երկար պիտի տեւէ՞  
...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կեցիր: ( Մատուրներովը կը քննէ ակոռները ) Իրատունք ունիք... բայց ես  
դիտմամբ քովի ակոռան քաշեցի:

ՄԱՐԿՈՍ, բարկութեամբ

Դիտմա՞ մբ... դիտմա՞մբ, մեղք չէ՞ իմ ողջ ակոռայիս որ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ի՞նչ ըսեմ, տղայ, դուն անմիտ ես... թէ որ այս ակոռան չհանէի, միւսը շատ  
դժուարութեամբ պիտի կրնայինք քաշել. չեմ յուսար որ այս խօսքիս չհամոզուելու  
չափ տխմար ըլլաս. կը հարցնեմ քեզի, միթէ կրնա՞ն ծառ մը խլել, թէ որ արմատը  
աղէկ չբանան, պատասխան տուր:

ՆԻԿՈ

Ըսածները ճշմարիտ են:

## ՄԱՐԿՈՍ

Է՛հ, իմ բերանս պարտե՞զ է:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Իմ ըսածս նմանութիւն մ'է: Ես քեզի չափ չե՞մ խորհիր, որ ցաւող սկոռան մէկէն ի մէկ հանեն, հա՛, հա՛, հա՛:

## ՆԻԿՈ

Ինքը աղէկ կը խորհի:

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ես կ'ուզեմ, որ ընելիք գործս առաջուց մտածեմ, վերջը կատարեմ. կը հասկնա՞ս, ալ վախ չկայ, ասոր արմատը աղէկ բացուեցաւ:

## ՆԻԿՈ

Ամէնուն ալ անանկ կ'ընենք:

## ՄԱՐԿՈՍ

Տակաւին պիտի խօսի՞ք, ինչ որ պիտի ընես ըրէ՛ լմնցո՛ւր, շուտ եղիր, շո՛ւտ...

## ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կամաց քալողը չյոգնիր, կ'ըսէ առածը:

## ՆԻԿՈ

Իրաւ է, ինքը բնաւ չյոգնիր:

ՄԱՐԿՈՍ, մեկուսի

Անգամ մը ոտքս դռնէն դուրս կոխեմ... ( Բարկութեամբ բարձրաձայն ) Շո՛ւտ եղիր, ես ձեր խաղալի՞քն եմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, որ սեղանին վրայէն շիշերը կը խառնէ իբր թէ բան մը կը փնտռէ

Փատը... փատը դիր բերանը. ապերա՛խտ, հոգով մարմնով կ'աշխատիմ քեզի ծառայութիւն մը ընելու եւ դուն կը յանդգնիս առանց ամչնալու ինձի դէմ խօսելու, կարծեցիր թէ քէնէ ստա՞կ պիտի առնեմ. ի՞նչ եղար, համբերէ քիչ մ'ալ, ա՛ն ակռադ գնա:

ՏԵՍԻԼ Չ.

ՆՈՅՆՔ եւ ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ

Բարեւ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, սեղանին առջեւ զբաղած

Աստուծոյ բարին:

ՄԱՐԳԱՐ

Երէկ գիշեր ուշ հասայ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Հասար:

ՄԱՐԳԱՐ

Չկրցի հոս գալ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չկրցիք:

ՄԱՐԳԱՐ

Ձեզի ըսելիք ունիմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, միշտ զբաղած

Կրնաք ըսել:

ՄԱՐԳԱՐ

Տիկինը տեսայ որ բարկացած կ'երթար:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կրնայ երթալ:

ՄԱՐԳԱՐ

Կռու ե ՞ր էք հետը:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կռուեր ենք:

ՄԱՐԳԱՐ

Բայց չվայլեր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չվայլեր:

ՄԱՐԳԱՐ

Պէտք է որ ամուսինն մը իր կինը սիրէ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պէտք է որ սիրէ:

ՄԱՐԳԱՐ

Ըսել է որ դու ք չէք սիրեր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չեմ սիրեր:

ՄԱՐԳԱՐ

Այսպէսով իր մահուանը պատճառ կ'ըլլար:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կ'ըլլամ:

ՄԱՐԳԱՐ

Պէտք է որ ըլլար:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պէտք է:

ՄԱՐԳԱՐ

Պէտք չէ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պէտք չէ:

ՄԱՐԳԱՐ

Կը տեսնեն որ գործ ունիք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Գործ ունիմ:

ՄԱՐԳԱՐ

Ձեզի հետ խօսիլ կ'ուզեի:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Խօսեցէք:

ՄԱՐԳԱՐ

Կերեի որ զբաղեայ էք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Զբաղեայ եմ:

ՄԱՐԳԱՐ

Ինչպէս ընենք, քանի մը ժամէն գա՞մ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Եկուր:

ՄԱՐԳԱՐ

Կրնա՞մ հոս գտնայ ձեզ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կրնաք:

ՄԱՐԳԱՐ

Թե որ չգտնա՞մ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Չէք գտնար:

ՄԱՐԳԱՐ, մեկուսի

Կ'երեւի որ միտքը շատ յուզուած է, որովհետեւ ըսածը չգիտեր: ( Բարձր ) Քանի  
մը ժամէն պիտի գամ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Եկուր:

ՄԱՐԳԱՐ

Մնա բարով:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Գնա բարով: ( Մարգար կը մեկնի ):

ՏԵՍԻԼ է.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ՄԱՐԿՈՍ, ՆԻԿՈ

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մօտ եկո՛ւր, երկու ժամէ ի վեր քեզի համար դեղ կը փնտռէի, ահա գտայ: ( Շիշ  
մը տալով ) Ա՛ն ասիկա, բամպակի վրայ քանի մը շիթ կաթեցուր, օրը ութն  
անգամ ցատող ակռային վրայ դի՛ր, քանի մը օր ասիկա ըրէ, տեսար որ ցարը

կ'աւելնա յ ինձի եկուր, սեպէ՛ թէ բժշկուեցար: ( Մարկոս գրուիսը կը շարժէ, ինացնելով որ հասկցաւ ): Կայնէ հիմա, բերնէդ հանեն սա փատը: Նիկո՛, ոտները, ձեռները քակէ. ( Նիկո կը քակէ ) հասկցա՞ր, տղաս, կարծեն թէ առանց քաշելու այդ ցաւող ակոսան պիտի բուժիս:

ՄԱՐԿՈՍ, սեղանին մօտենալով ատրճանակը կ'առնէ

Պատասխան տո՛ւր հարցումներու, արեւելեա՞ն է թէ արեւմտեան:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ա՞ս ինչ պիտի ըլլայ:

ՄԱՐԿՈՍ

Ամենափոքր շարժում մը կրնայ մահ պատճառել. Նիկո՛, ձեռները կապէ՛:

ՆԻԿՈ

Պարոն...

ՄԱՐԿՈՍ

Հիմա կը մեռցնեն, շուտ կապէ՛. ( Առ Թափառնիկոս ) վերի՞ թէ վարի՛ յարկն է:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կորի՛ սըկէ, գարշելի...

ՄԱՐԿՈՍ

Ապերա՛խտ, ինձի դէմ կը խօսիս. Նիկո, փատը դիր բերանը:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Վերջապէս պիտի...



## ՄԱՐԿՈՍ

Համբերութիւն, սովորութիւնս այս է, կը կապեն, վասնզի ատամնաբոյժ մը միայն վկայականով չկրնար կատարեալ ատամնաբոյժ ըլլալ, պէտք է քիչ մ'ալ խելք ունենալ, ինչպէս որ վարդապետ մը սեւ վեղարով չկրնար կատարեալ վարդապետ ըլլալ, թէ որ ուսմունք չունենայ: Թէպէտ եւ իմ բռնած ընթացքս հիւանդներու տհաճոյ կը թուին, բայց վերջը գոհ կ'ըլլան: ( Աքցանը առնելով )  
Համբերէ՛, սեպէ՛ թէ ակռադ ելաւ:

ՆԻԿՈ, մեկուսի

Ես երթամ, չըլլայ որ իմ ալ ակռաս քաշէ: ( Կ'երթայ ):

ՄԱՐԿՈՍ, արցանը Թափառնիկոսի բերանը խոթելով

Ա՛հ, թշուառ տղայ... շատո՞նց ի վեր է որ կը ցաւի:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Ա՛հ... ա՛հ...

ՄԱՐԿՈՍ

Ինձի տուած իղ է դ քանի մը կաթիլ կաթեցոր եւ ցաւող ակռային դիր... մնաք բարով... ահա, պարոն ատամնաբոյժ, ասիկա Ատամն ընդ ատաման եղաւ: ( Կ'երթայ ):

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ

Ա՞հ... Ուրկէ էր որ դիմացս ելաւ սա մարդը... ձեռներս, ոտներս կապեց: ( Կանչելով ծառան ) Նիկո, Նիկո...

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ եւ ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ, բարկութեամբ մտնելով

Ո՛չ Քաղաքական կայ, ո՛չ Թաղական եւ ոչ Կրօնական ժողով(6)... միշտ Խառն ժողով կ'ըլլայ. կանոնաւորը տեսած չունինք: Որո՞ւ երթամ յայտնեմ ցաւերս... ա՛հ, կանայք թշուառ են... ( Էրիկը տեսնելով ) Աս ի՛նչ է... ա՛հ, անօրէն մարդ... պատիժդ գտեր ես... ահա այսպէս կապուած կեցիր... ո՛հ... հիմա քիչ մը սկսաւ սիրտս ուրախութիւն գ գ ալ... կը յիշե՞ս ինձի ըրածներդ, անգգամ. տես գլուխս, դուն ճերմկցուցիր աս մազերը...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ճերմակը սեւին վրայ աղէկ կը վայլէ:

ՄԱՐԹԱ

Այս վիճակիդ մէջ անգամ զիս կ'ատես. դուն իմ ստակովս մարդ եղար...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ես քեզ չեմ ճանչնար:

ՄԱՐԹԱ

Չե՞ս ճանչնար, հիմա կը ճանչցընեմ ինքզինքս... երթամ ժամկոչները կանչելու, որ գան առնեն Փրկիչ տանին քեզ: ( Վազելով կ'երթայ ):

ՏԵՍԻԼ Թ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ առանձին, վերջը ԼԵԻՈՆ

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Թէ որ մինչեւ հիմա սրտիս մէջ իրեն համար սէր կը կրէի, ան ալ դուրս ըրի. ասկէ վերջը անհնարին է, որ կարենամ հետը ապրիլ... այսպիսի նախանձորդ կանանց հետ ապրիլը... կատուներու հետ խաղալու պէս է, պանիր տուած ժամանակդ կը

ճանկոտեն... եւ ո՞վ եղաւ բոլոր այսօրուան ձախորդութեանց պատճառ, եթէ ոչ  
ինքը. կ'ուզէ որ սիրուի վաթսուն տարուան հասակին մէջ. թէ որ մէկ ուրիշ կնկան  
երեսը նայիմ, կոհի ընելու կու գայ վրաս... այս նախանձը չէ՞ որ կանանց  
գեղեցկութիւնը կ'ոչնչացնէ...

ԼԵՒՈՆ

Մարդ չկայ հոս...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պարոն...

ԼԵՒՈՆ, մէկէն ի մէկ երեսը բռնելով իբր թէ ակռան կը ցաւի

Ի՞նչ կայ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ի՞նչ կ'ուզէք:

ԼԵՒՈՆ

Ատամնաբոյժը կը փնտռեն, կ'ուզեն ակռաս ցցունել, ո՞ր գացեր է արդեօք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Հոս է, հիմա կու գայ:

ԼԵՒՈՆ, մեկուսի

Ո՞ր էր թէ սա մարդը երթար ու Երանեակը գար հետը խօսէինք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, մեկուսի

Իրեն գուրցեն անգամ մը նայիմ կը քակէ՞ ձեռներս. ինչ գիտնայ, զիս գող կամ  
աւագակ պիտի կարծէ:

ԼԵԻՈՆ

Դուք ինչո՞ւ հոս կեցեր էք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պիտի երթամ... սա ոտներս քակեցէք:

ԼԵԻՈՆ

Շատ աղէկ, պարոն ( Կը քակէ ):

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Հրամանքնիդ քիչ մը սպասեցէք, ատամնաբոյժը հիմա կու գայ: ( Մեկուսի )  
Երթամ սա թշուառական Նիկոն գտնալու...

ՏԵՍԻԼ Ժ.

ԼԵԻՈՆ, վերջը ԵՐԱՆԵԱԿ

ԼԵԻՈՆ

Քիչ մնաց որ ձեռք պիտի անցնէի, այս դէպքը Երանեակին նամակին չյարմարեցաւ: ( Նամակ մը կը հանէ կը կարդայ ) « Վ աղը ժամը երեքին տան մէջ մինակ պիտի ըլլամ, եկո՛ւր զիս գրկելու»: Ո՞ր է, չգար, որ գրկեմ, կարծեմ, հայրը, մայրը հոս են. ծառան ծուռ ծուռ երեսս նայեցաւ, չըլլա՞յ թէ Երանեակը զիս մատնելու համար հոս հրաւիրած ըլլա յ. կը յուսացուի, վասնզի հայ ենք. հայ ըսելը մատնութիւն ըսել է:

Այո՛, մեր ստացուածքն է մատնութիւնը ի վաղուց անտի, հարուստներէն մինչեւ աղքատները, լուսաւորեալներէն մինչեւ խաւարեալները, ամէնքն ալ ունին ասիկա. մեր առաջին զէնքն է. Բրուսիոյ ասեղնաւոր հրացաններէն աւելի զօրաւոր է. ամէն պարագաներու մէջ անոր կը վստահինք, անով յառաջ կը

քալենք. այլ ինչ օգուտ, որ վերջէն անով գետինը կը տապալինք, ու ծաղր ու ծանակ կ'ըլլանք... արդեօք Երանեակը... ( Երանեակ կը մտնայ տխուր ) ա՛հ, իմ երանելի Երանեակս, ճիշտ այն միջոցին եկար ուր՝ քեզ ի համար կը կասկածէի: Բայց ինչո՞ւ ասանկ տրտում տխուր...

ԵՐԱՆԵԱԿ

Տրտում տխուր:

ԼԵՒՈՆ

Լռիկ մնջիկ:

ԵՐԱՆԵԱԿ

Լռիկ մնջիկ:

ԼԵՒՈՆ

Միթէ իմ ներկայութի՞նս վանեց այտերէդ այդ վարդագեղ կարմրութիւնը, պատասխանէ՛, կո՛յսդ նագելի, միթէ իմ տե՞սքս կապեց լեզուդ, պատասխան տո՛ւր, ինչո՞ւ այդ ժպտափայլ շուրթերդ թալկացեր ու չեն շարժիր: Ա՛հ, Երանեակ, խօսէ՛, քո ւ այդ լռութիւնդ դառնաղէտ խորհուրդներ կ'ը ստեղծէ մտքիս մէջ:

ԵՐԱՆԵԱԿ

Լեւոն, քեզի նուիրած եմ սիրտս, կեանքս ու պատիւս. այլ ինչ օգուտ որ ընտանիքիս տգիտութիւնը քէնէ յա փ շտակել կ'ուզէ գանոնք:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ. ընտանիքդ հաւանութիւն չե՞ն տար, որ սիրես զիս:

ԵՐԱՆԵԱԿ

Այս առտու մօրս ըսի՝ թէ Մարգարի հետ չեմ կարգուիր. այս լսելուն պէս  
բարկացաւ, բորբոքեցաւ, կատղեցաւ...

## ԼԵՒՈՆ

Երանեակ, բոլոր գիշերը չքնացայ, անհամբեր այս ժամուն կը սպասէի, այս  
խօսքերը լսելո՞ւ համար. երբեմն աչերս կը գոցէի քու գեղածիծաղ պատկերդ կը  
տեսնէի, եւ այն խօսքը գոր առջի օրը քու սիրաբոյր շուրթերէդ սահեցաւ,  
գիշերուան խոր լռութեան ատեն միշտ ականջներուս կը հնչէր. այո՛, այն ձայնը,  
որով արտաբերեցիր «կը սիրեմ գրեգ» խօսքը սիրտս վիրատրեց, անբուժելի վէրք  
մը բանալով հոն եւ դեռ առաւօտուն անկողինէն ելնելուս պէս ( Կերգէ ):

Երթամ ըսի Երանեակի՛ս,  
Յայտնել իրեն գաղտնիք սրտիս,  
Չորոց ել թէ իր դէմք գեղանի  
Երջանկութեանս է հայելի:

Համբոյրի՛կ մը, օ՛ն Երանեակ,  
Տուր որ առնեմ քու այտերէն.  
Կոյսդ նագելի, սիրուն հրեշտակ,  
Թո՛ղ շուրթերս սէր ճաշակեն:

Ինձի լսէ, Երանեակ, ի՞նչ փոյթ քեզի, որ ընտանիքդ հաւանութիւն չտար. քանի որ  
դուն գիս սիրել կը հաճիս, ամէն ջանք ընտանիքիդ անօգուտ է. միթէ կրնա՞ն  
սրտիդ մէջ յորդաբուղխ սիրոյ վտակն չորցնել... օ՛ն, քաջալերուէ՛... մի՛ վհատիր:

## ԵՐԱՆԵԱԿ

Բա՛ւ է, ալ բաւ է. ես քեզի համար կեանքս կը գոհեմ, պիտի բաժնուիմ ընտանիք  
է ս, քեզի պիտի ընկերանամ ուր որ երթաս. ինչ վիճակի մէջ ալ գտնուիս, թէ որ  
անօթութենէ մեռնիլ հարկ ըլլայ, պիտի մեռնիմ, Լեւոն, բուռն կիրքով կը սիրեմ  
գրեգ, բուռն ուժով կը մերժեմ Մարգարը, որ բռնութեամբ ինձի նշանեցին, կ'ատեն  
իւր սէրը, կ'անհիծեն նաեւ ընտանիքս՝ որ թող չեն տար սիրոյս  
համապատասխանող անձի մը հետ միանամ... քուկդ եմ ես, Լեւոն, ք ու կդ: (

Լեւոնի բազկացը վրայ կ'իյնայ ):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ԹԱՓԱՌՆԻԿՈՍ եւ ՆԻԿՈ

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, փատ ի ձեռին Նիկոն հալածելով

Ո՞ր կը փախչիս, անիծից արմատ... իմ ոտքս ձեռքս կը կապես, ո՞վ հրամայեց քեզի:

ՆԻԿՈ

Ատտրրրճաճանակը...

( Երանեակ եւ Լեւոն շուարած կը նային ):

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Անպիտա՛ն, թէ որ անգամ մ'ալ ասանկ բան մը ընես, գլուխդ կը ջախջախես:

ՆԻԿՈ, առանց հասկնալու

Ինձի ի՞նչ, ջախջախե՛:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կորի՛ սըկէ ( Նիկո կ'երթայ ): Երանեակ, դուն ի՞նչ գործ ունիս հոս:

ԵՐԱՆԵԱԿ

Ե՛ս...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դուն:

ԼԵԻՈՆ

Անիկա...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ինքը:

ԵՐԱՆԵԱԿ

Ե՞ս...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Սենեակի քաշուէ՛:

ԵՐԱՆԵԱԿ, երթալով

Իմս ես, Լեւոն:

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, ԼԵԻՈՆ վերջը ՆԻԿՈ

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Եկուր սա ակռան քաշենք:

ԼԵԻՈՆ

Ակռայիս ցաւն անցաւ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ատիկա ինձի չվերաբերիր, թող չգայիր, հոս տեղ հիւանդանոց չէ, պէտք է որ ակռադ քաշել տաս, իմ աշխատութեանս վարձը տաս ու ետքը երթաս,



կ'իմանա՞ս. եւ քեզի բարեկամաբար սա ալ իմաց կու տամ, որ յօժարակամ անձնատուր եղիր, սկոռան քաշենք, ապա թէ ոչ, վերջը գէշ կ'ըլլայ, Նիկո'... Նիկո'... Նիկո' ... Նիկ...

ՆԻԿՈ

Հրամմէ, տէր:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Նախապատրաստութիւնները տես...

ՆԻԿՈ

Վերջը միտին պէս չըլլայ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Է՛ջ. քեզի ինչ որ կը հրամայեն, զայն կատարէ:

ՆԻԿՈ

Պարոնը ո՞ր կողմէն է, արեւելեա՞ն թէ արեւմտեան:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Գործդ տե՛ս:

ՆԻԿՈ, չուանը առնելով Լեւոնին կը մօտի

Կայնէ՛:

ԼԵՒՈՆ, մեկուսի

Ի՞նչ ընել կ'ուզէ, ոտքս պիտի կապէ, փախչելու ճար մը:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Շուտ եղիր:

ՆԻԿՈ

Շուտ, ( Այն միջոցին որ Լեւոնի ոտքը պիտի կապէ, Լեւոն կից մը կու տայ կը փախչի. Նիկոն գետնի վրայ պատկած թողով ):

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, վագելով

Բոնեցէք գողը, աւագակր:

ՆԻԿՈ, ելնելով, իյնալով

Ես ալ սրտը ետեւէն երթամ բռնեմ, վասնզի տէրս բարկանալուն պէս բերնիս մէջ ակռայ չթողուր, կը քաշէ... շատ վարպետ է ( Վագելով կ'երթայ ):